ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕГАРКУНИКСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ с.НОРАШЕН

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

19. հունվարի 2018թ. N 2

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
/ ԶԵԿ. Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ / :

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի և ՀՀ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 10-րդ հոդված1-ին 3-րդ, 4-րդ, 5-րդ կետերի և 11-րդ հոդվածի պահանջներով , Նորաշեն համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել 2018թ. համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ տարեկան դրույքաչափերը:

1.Համայնքի տարածքում բացօդյա վաճառք կազմակերպելու թույլատվության համար՝
ա/ Գազի և վառելիքաքսայուղային նյութերի համար՝ ընթացիկ տարվա համար՝ 50000 դրամ:
բ/ Գյուղատնտեսական մթերքների համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 100դրամ:

2. համայնքի տարածքում ոգելից խմիչքների արտադրանքի վաճառքի թույլատվության համար՝
ա/ Հիմնական շինության ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 դրամ :
բ/ Ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 1500 դրամ:

2.1 համայնքի տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլատվության համար՝
ա/ Հիմնական շինության ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 դրամ :
բ/ Ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար 1500 դրամ:

3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տրամադրման) թույլատվության համար՝
Հիմնական օբյեկտների համար՝
ա/ մինչև 300 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների , ինչպես նաև մինչև 200 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝10000դ:
բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 10000.0դր.

բբ/ 501-ից մինչև 1000 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000.0 դր:

բգ/ 1001-ից և ավելի քառ. մետր մակերես ունեցող օբյեկտների համար 20000.0դր.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ/ Մինչև 20 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող օբյետների համար՝ 3000 դր.: դ/ 20 և ավելի քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար `5000 դր.:

4.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար՝ 3000դր.:

5. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար 1000դր.:

6.Նոտարական ծառայություններ կատարելու , նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, փաստաթղթերի պատճեները հանելու և դրանից քաղվածքներ տալու համար 500դր., կտակը հաստատելու և բացելու համար 2000դր:

Հարցը քվեարկվեց՝

Կողմ- 5, դեմ-0, ձեռնպահ-0

Համայնքի ավագանու անդամներ.

Կողմ `..... Պ.Ավագյան

Կողմ՝..... Ա.Գրիգորյան

Կողմ՝ ..... Խ.Հակոբյան

Կողմ՝ ..... Ռ.Սահակյան

Կողմ՝ ..... Ա.Սարիբեկյան

ՆՈՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ